Ֆլամեգիս	Վարակներ
Ինֆլիքսիմաբ **Պացիենտի տեղեկատվական քարտ** Ցույց տվեք այս քարտը Ձեր բուժմանը մասնակցող ցանկացած բժշկի։ Այս քարտը պարունակում է կարևոր տեղեկատվություն դեղի անվտանգության մասին, որին պացիենտը պետք է ծանոթանա մինչև ֆլամեգիս դեղով բուժում սկսելը և բուժման ընթացքում։ Պացիենտի ԱԱՀ՝ Բժշկի ԱԱՀ՝ Բժշկի հեռախոսահամար՝ Նոր դեղի ընդունումը սկսելիս խնդրում ենք պահպանել այս քարտը որպես տեղեկատվական նյութ ֆլամեգիս դեղի վերջին դեղաչափից հետո 4 ամիս շարունակ։ Խնդրում ենք ուշադիր կարդալ ֆլամեգիս դեղի կիրառման հրահանգը մինչև դեղի ընդունումը։ Ֆլամեգիս դեղով բուժումը սկսելու ամսաթիվ՝ Ներկայիս օգտագործում՝ Կարևոր է, որ Դուք և Ձեր բժիշկը գրի առնեք դեղի առևտրային անունը և խմբաքանակի համարը։ Առևտրային անուն՝ Խմբաքանակի համար՝ Խնդրեք բժշկին ստորև գրանցել Ձեր տուբերկուլոզի (ՏԲ) վերջին հետազոտության տեսակը և ամսաթիվը։	**Ֆլամեգիս դեղով բուժումը սկսելուց առաջ՝** •Տեղեկացրեք Ձեր բժշկին, եթե ունեք վարակ, նույնիսկ եթե այն շատ աննշան է։ •Շատ կարևոր է տեղեկացնել Ձեր բժշկին, եթե երբևէ հիվանդացել եք տուբերկուլոզով կամ սերտ շփման մեջ եք եղել տուբերկուլոզով հիվանդի հետ։ Ձեր բժիշկը կհետազոտի՝ պարզելու համար ունեք արդյոք տուբերկուլոզ: Խնդրեք բժշկին գրանցել Ձեր տուբերկուլոզի վերջին հետազոտության տեսակը և ամսաթիվը քարտում։ •Տեղեկացրեք Ձեր բժշկին, եթե ունեք հեպատիտ Բ, եթե գիտեք կամ կասկածում եք, որ հանդիսանում եք հեպատիտ Բ վիրուսակիր։ **Ֆլամեգիս դեղով բուժման ընթացքում՝** •Անմիջապես հայտնեք Ձեր բժշկին, եթե վարակի նշաններ են ի հայտ գալիս։ Նշաններից են՝ տենդը, հոգնածության զգացումը, (մշտական) հազը, հևոցը, քաշի կորուստը, գիշերային քրտնարտադրությունը, փորլուծությունը, վերքերը, ատամների խնդիրները, միզելու ժամանակ այրոցը կամ «գրիպանման» ախտանիշները։ **Հղիություն, կրծքով կերակրում և պատվաստում** •Եթե դուք ստացել եք Ֆլամեգիս հղիության ընթացքում կամ կերակրում եք կրծքով, կարևոր է այդ մասին տեղեկացնել Ձեր երեխայի բժշկին մինչ երեխան կստանա որևէ պատվաստանյութ։ Ձեր երեխային չպետք է տրվեն «կենդանի պատվաստանյութեր», ինչպիսիք են ԲՑԺ-ն (օգտագործվում է տուբերկուլոզի կանխարգելման համար) ծնվելուց հետո 12 ամսվա ընթացքում կամ կրծքով կերակրման ընթացքում, եթե Ձեր երեխայի բժիշկը այլ խորհուրդ չի տվել։

Թեստ՝ Թեստ՝ Ամսաթիվ՝ Ամսաթիվ՝ Արդյունք՝ Արդյունք՝ Խնդրում ենք համոզվեք, որ յուրաքանչյուր բժշկի այցելության ժամանակ Ձեզ հետ ունեք նաև Ձեր կողմից ընդունվող բոլոր այլ դեղերի ցանկը: Ալերգիաների ցանկ՝ Այլ դեղերի ցանկ՝	Պահեք այս քարտը Ձեզ մոտ ֆլամեգիսի վերջին դեղաչափից հետո 4 ամիս կամ, եթե հղի եք, երեխայի ծնվելուց հետո 12 ամիս շարունակ: Կողմնակի երևույթները կարող են ի հայտ գալ վերջին դեղաչափից հետո երկար ժամանակ անց: